# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

# ՀՐԱՄԱՆ № 12-Լ

«30» 03 2026թ. ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Արարատի մարզի դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Երևան քաղաքի Մալաթիա - Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիքը նույն մարզի դատախազի տեղակալի 1 հաստիքով փոխարինելու, ինչպես նաև Արմավիրի մարզի դատախազության դատախազի 2 հաստիքը նույն դատախազության ավագ դատախազի 2 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

**Հրամայում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 22-րդ գլխի 84-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 6» բառերով, իսկ «Ընդամենը 9» բառերը՝ «Ընդամենը 10» բառերով,

2) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 23-րդ գլխի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 104» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 105» բառերով,

3) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 25-րդ գլխի 96-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, իսկ «Ընդամենը 14» բառերը՝ «Ընդամենը 13» բառերով,

4) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 26-րդ գլխի 98-րդ կետի «Դատախազի տեղակալ 2» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 3» բառերով, 99-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 5» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 6» բառերով, իսկ 100-րդ կետի «Դատախազության դատախազ 8» բառերը՝ «Դատախազության դատախազ 6» բառերով,

5) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 33-րդ գլխի «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 121» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում 120» բառերով,

6) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 104» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 105» բառերով, իսկ «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 121» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 120» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության

վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ**
**ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ** **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**